Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 29-04-2020 թ. որոշմամբ
«ԱՐՄԵՆԱԿ ԵՎ ԱՆՆԱ ԹԱԴԵՈՍԵԱՆՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԱՐՄԵՆԱԿ ԵՎ ԱՆՆԱ ԹԱԴԵՈՍԵԱՆՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ Ե.Կողբացու 28 72
1.3 Պետական գրանցման համարը		222.160.733033
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2012-10-11
1.5 ՀՎՀՀ-ն		02612236
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10530093
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		mgfgroup.llc@gmail.com
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը		
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	50000	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	«Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնություն»	95592844
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտ	17646539
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	

9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
	0	0
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
«Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնություն»	95592844	
«Ֆիննական զարգացման և համագործակցության ծրագիր»	17646539	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	107611398	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	105051321	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 1 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

ԱՆԿԱԽ ԴԻՏԱՐԿՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

“Արմենակ և Աննա Թադեոսեանների Բժշկական Կենտրոն” Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահին

Մենք իրականացրել ենք “Արմենակ և Աննա Թադեոսեանների Բժշկական Կենտրոն” Հիմնադրամի կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների դիտարկումը 2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ, որը ներառում է 2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, հաշվետու տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Այս ֆինանսական հաշվետվությունների՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Անկախ դիտարկողի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված դիտարկման արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք դիտարկումն իրականացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և դիտարկման աշխատանքները պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Դիտարկման աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել համապատասխան ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են անկախ դիտարկողի դատողությունից, ներառյալ ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս անկախ դիտարկողը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, որպեսզի մշակի համապատասխան ընթացակարգեր, բայց ոչ կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Դիտարկման աշխատանքները

ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված համապատասխան ապացույցները բավականաչափ են և համապատասխանում են մեր դիտարկման եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները՝ 2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, հաշվետու տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացված, կազմված են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և համապատասխանում են ՀՀ օրենսդրության պահանջներին:

Անկախ դիտարկող՝ _____ Գ. Ախոյան

«ԴԻ ՋԻ ԿՈՆՍԱԼԹԻՆԳ»
«D G CONSULTING»
«ДИ ДЖИ КОНСАЛТИНГ»
02611105

Digitally signed by KOLOYAN ZAVEN 3402850060
Date: 2020.06.30 20:10:17 AMST

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2020 18:24